№ 19 ԹԷՀԵՐԱՆ ՇԱԲԱԹ 7 ՄԱՅԻՍԻ 1894 № 19

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ" ԼՈՒՍՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 դրան, կէս տարուանը 6 դրան: Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 բուլբի և տարեկան 5 ֆր. կամ 2 բուլբի: Թէհրանում գրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մերթհասցէն, Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն տեսակ լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրթական գործը Պարսկահայերի մէջ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ուսման նշանակութիւնը. Հասարակութեան լուսաւորութեան միջոցներից մէկը. Նամակ Խարբերդից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—„Շաւիղի" Յաւելուած ՀԱՅՐԻԿԻ ԿՈՆԴԱԿԸ:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՊԱՐՍԿԱՀԱՅԵՐԻ ՄԷՋ

III.

Մեր նախորդ երկու յօդուածներով մենք ցոյց տուինք որ դպրոցական գործի բարւոքման և կանոնաւորութեան համար առաջին քայլը որ կարելի է անել, իրաւասութիւնների որոշումն է: Այս այդ է գործի սկիզբը, բայց այդ չէ բոլորը:

Երկրորդ քայլը, որ նոյնչափ կենսական նշանակութիւն ունի, ընդհանուր ծրագրի որոշումն է: Միայն մեր խաչիֆալական փարժարաններն էին, ուր ուսուցչին ազատ էին թողնում իւր իմացածը աշակերտին սովորեցնելու: Արդ, պարսկահայոց բոլոր, բոլոր դպրոցները, առանց բացառութեան, կամ ծրագիր չունին, կամ ունին մի ծրագիր որ փոխւում է ամեն հոգաբարձութեան, ամեն ուսուցչական նոր կազմակերպութեան հետ: Քիչ անգամ է պատահում, այն էլ միայն մի երկու կեդրոնում որ հոգաբարձուներից մի քանիսը ճշմարիտ հասկացողութիւն ունենան վարժարանական գործերի մէջ: Հոգաբարձուները մեր մէջ ընտրւում են առաւելապէս իւրեանց ձեռներէց ոգու նկատողութեամբ, ազգային գործերի մէջ պիտանի լինելու ցանկութիւն ունեցողներից, և մանաւանդ այնպիսի փարգկանցից, որոնք կարող են պաւելի շատ դրամ ՀՐՐելել ազգային անտուկը: Արդ, մի մարդ կարող է շատ ազդասէր, ազդեցիկ և օգտակար լինել, շատ դրամ շահեցնել ազգային անտուկին և ոչինչ հասկացողութիւն չունենալ մի ուսումնարանի ծրագրից: Ցանձնել ծրագրի կազմութիւնը այդպիսի անձեռնհաս անձերի, կամ այդ անձերի վստահութիւնը գրաւող, գուցէ նոյնչափ անձեռնհաս ուսուցիչների, այդ կը լինէր մատնել վարժարանը սանն հողմերի, և ահա ինչ որ կատարւում է մեր մէջ:

Մենք չենք կամենում մանրամասնութեանց մէջ մտնել, մենք տեսել ենք ուսումնարաններ, ուր աւանդուած առարկաների անհամեմատութիւնը գայթակղական է, մենք տեսել ենք ուսումնարան ուր մի աշակերտ որ ամենաչընչին գաղափարը չունի հասարակ կոտորակի վերայ, սովորում է բնախօսութեան և մարդակազմութեան բարձր դասընթացը, որ միայն սովորական է եւրոպական ուսումնարանների 7-րդ դասարանին, մենք տեսել ենք հայ-լուսաւոր սկան դպրոցի մէջ կրօնը աւանդուած մի տասնեակ էջից բաղկացած մի „Քրիստոնէական վարդապետութեամբ", և ամբողջ մի երկու տարի զոհուած լունակչն դիւցարանութեան, որի մէջ քիչ չեն բարոյականի համար գայթակղեցուցիչ ուսանելիներ, մանաւանդ մի 14 տարեկան պատանեակի համար: Այս և այսպիսի դէպքեր սովորական են մեր մէջ: Քիչ տա միօրինակութիւն մեր դպրոցների մէջ մտցնողները եղան Ռուսաստանից եկած ուսուցիչները. այնու ամենայնիւ ոչինչ հաստատ չէ. և այն ուսումնարանը որ այսօր ունի կանոնաւոր կազմակերպութիւն ծրագրի կողմից, վաղը կարող է մի ուսուցչի, մի տեսչի հեռանալով մատնուիլ սարսափելի անկանոնութեան:

Ընթերցողը տեսաւ որ այս բոլոր զեղծումները ծագում են նորանից որ պարսկահայոց դպրոցները չունին միօրինակ, պարտաւորեցուցիչ և անփոփոխ ծրագիր: Մենք այդ ծրագիրն ևս սպասում ենք մեր հոգեոր վերին կառավարութիւնից: Մենք չենք կարող անփոփոխ կերպով ընդունել ռուսահայ ուսումնարանների ծրագիրը, տեղական հանգամանքներ կան ի նկատի առնելու: Այնու ամենայնիւ քիչ փոփոխութեամբ այդ ծրագիրը պէտք է յարմարեցնել մեր ուսումնարաններին: Այս ծրագրի կազմութիւնը Վեհափառ Կաթուղիկոսը կարող էր յանձնել Ուսումնական Յանձնաժողովին, որը դիմելով բոլոր պարսկահայ ուսումնարաններին կարող էր պահանջել նորանից ծրագրի նախագիծներ. այդ նախագիծների մէջ արդէն նկատելի կը լինէին տեղական հանգամանքների պահանջած փոփոխումները. որից յետոյ ուսումնական յանձնաժողովը կարող էր գծել մեզ համար միօրինակ ծրագիր և ենթարկել Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեան:

Այդպիսի մի ծրագրի կազմութիւնը պարսկահայերի համար կը լինէր մի նոր դարագլուխ, և մենք այդ ակնկալում ենք ս. Էջմիածնից միայն, որովհետև այժմ չը կայ մի ձեռնհաս իշխանութիւն որ հաւասարապէս յարգուած լինէր բոլոր պարսկահայ ուսումնարանների կողմից: Պէտք է վերջ դնել այժմ տիրող անկանոն վիճակին, մինչև անգամ մի վատ օրէնք աւելի լաւ է քան թէ օրէնքի կատարեալ բացակայութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ոչ թէ միայն պարսկահայ ժողովուրդն է, որ ուսման և գիտութեան իսկական նշանակութիւնն այլ կերպ է ըմբռնում, այլ և ռուսահայ ժողովուրդը, որ կրթութեան և զարգացման աւելի բարձր աստիճանի վերայ է կանգնած: Հայերս, իբրև վաճառական մի ազգ. ինչպէս ամեն հարցի վերայ նայում ենք շահի տեսակէտով, այնպէս և ուսման վերայ: Սաածներս ապացուցանելու համար մեծ փաստեր հարկաւոր չեն, բաւական է լիշել, որ Տփխիսում շատ կըը-

թուած հոգաբարձուներ, ուսուցիչներ, խմբագիրներ և նոյն իսկ քահանաներ՝ թողած իրանց հովանաւորութեան տակ գըտնուած մայրենի դպրոցները, իրանց որդիներին ուղարկում են զանազան գիմնազիաներ և ըէալական դպրոցներ, և եթէ դուք գիմելու լինէք այդ ազգային գործիչներին ու հարցնէք դորա պատճառը, նոքա իւրաքանչիւր ձեզ կը պատասխանեն „որդուս ապագան զոհեմ թէ ինչ է ազգասիրութիւն եմ անում... տամ ազգային դըպրոցը որ ինչ գառնայ —կոպէկ ժողովող քահանայ, թէ 200 մանէթով ծառայող վարժապետ“... այս պատասխանից արդէն պարզւում է, որ նա իւր որդուն առուել է գիմնազիայ ոչ թէ ի նկատի ունենալով, որ աւելի բարձր կրթութիւն կըստանայ, այլ, թէ՝ այդտեղ աւարտելուց յետոյ աւելի շահ կարող է ստանալ, աւելի մեծ ռոճիկ կարող է վերցնել։ Ուրեմն, եթէ համեմատաբար զարգացածները դորանով են բացատրում ուսման, կրթութեան նշանակութիւնը, ապա ինչ կերպ կարող են բացատրել ոչ-զարգացածները, ոչ ապաքէն նոքա առաւել ևս շահի տեսակէտով պէտք է նային ուսման վերայ։ Մտէք Դաւրէժ, մտէք Թէհրան, Ջուղա, Սալմաստ, ինչ ցաւալի տպաւորութիւն կը թողնեն ազգային վարժարանների դատարկ նստարանները ձեզ վերայ, մինչդեռ հարիւրաւոր երկսեռ հայ մանկտիք վխտում են միսիոնարների և պատերների մոլորեցուցիչ գիրախներում։ Իբրև կարեկից՝ դիմեցէք անմեղ երեխաների շահախնդիր ծնողներին և հարցրէք այդ տխուր երևոյթի պատճառը, և ահա թէ ինչ կը պատասխանեն, „հայոց ուսումնարանից դուրս գալով ինչ գործ կարող է գտնել որդիս, իսկ քաղաքականաց և կամ կաթոլիկաց վարժարանն աւարտելուց յետոյ կարող է քանկում պաշտօն գտնել և օրինաւոր ռոճիկ ստանալ“, որքան էլ չը կամենանք այնու ամենայնիւ մի բոպէ ստիպուած ենք հաշտուիլ այն մտքի հետ, թէ մի գործի (լինի նա գիտութիւն թէ արուեստ) արժանաւորութիւնը չափւում է նրա գնահատութեամբ, և եթէ այդպէս են ընդունում ռուսահայ փոքր ի շատէ զարգացածները (ինչպէս ցոյց տուինք մի քանի տող վերը), պարսկանատանցին աւելի իրաւունք ունի այդպէս ընդունելու։ Թէև ամբողջ Պարսկաստանում մէկ քանկ միայն կայ՝ երկու թէ եթէք բաժանմունքներով, ուր հաշիւ թէ մի քանի տասնեակ թաղայիներ լինին այնու ամենայնիւ այդտեղ պաշտօն գտնելը մի փայլուն յոյս է, որ պարսկահայ ծնողներին մղում է դէպի բողոքականաց դպրոցը, ուր բաւականին անգլիերէն և ֆրանսերէն են սովորեցնում։ Արկնում ենք, թէև հարիւր ուսումնաւարտներից մէկը հազիւ կարողանայ բանկում պաշտօն գտնել, այնու ամենայնիւ դա մի յոյս է, որ բազմաթիւ հայ մանուկներին մղում է դէպի բողոքականաց և կաթոլիկաց վարժարանները, իսկ ինչ ապագայ ունեն հայ դպրոցները, որ կարողանան դէպ իրանց գրաւել շահամոլ ծնողներին և նոցա միջոցաւ էլ հայ մանուկներին։ —Ոչինչ և ոչինչ։ Եթէ ծնողները քիչ շատ ունևոր են, որդին աւարտելուց յետոյ (երբեմն էլ դեռ չաւարտած), տանում են իրենց խանութը և վաճառականութիւն են սովորեցնում, իսկ եթէ չքաւոր են, պատանին որքան էլ կրթութիւն ունենայ՝ նորան մի և նոյն բանն է վիճակուած, այսինքն՝ մտնել մի վաճառականի մօտ գործակատար՝ ամսական 10—12 դրան ռոճիկով (մօտ 2 ռուբլի)։ Քաւ լիցի, եթէ երբ և իցէ մեր մտքից անցել է դէմ լինել, թէ՝ պէտք է գործակատարներն էլ, մշակներն էլ, այգեպաններն էլ, հովիւներն էլ կրթութիւն ունենան, այո՛, շատ լաւ կը լինի եթէ այսպէս լինի, այն ժամանակ հայերն էլ շվեցարիացիք կը լինին, բայց չէ որ հայերի և շվեցարիացիների մէջ դեռ լեռներ ու ծովեր կան, այն ինչ որ նոցա համար սովորական բան է՝ մեզ համար դեռ անիրագործելի է և մի հրաշք է։

Խօսքներս մասնաւորենք Դաւրէժի վերայ։ Այստեղ հայոց երկու տղայոց դպրոցներ կան, առաջինը 3 պատրաստականով և 4 հիմնական դասարանով, իսկ երկրորդը 4 բաժանմունքով։ Եթէ ի նկատի ունենանք առաջինի ծրագիրը (որը նոր կազմուած լինելու պատճառաւ կարճ ժամանակից յետոյ կը գործածուի), կը խոստովանուինք որ բաւականին լուրջ է կազմուած և մի որոշ գիտութիւն է պարունակում իւր մէջ, սակայն այս բաւական չէ, փոխանակ մտածելու եղած ծրագրի օրինաւոր գործադրութեան վերայ, փոխանակ ծրագրին անհրաժեշտ պիտոյքները ձեռք բերելու, առանց որոնց ծրագրի գոյութիւնը լոկ անուանական կը լինի, —դաւրիժեցիք մտածում են մի բարձրագոյն դպրոց ունենալու մասին։

Շատ լաւ կը լիներ, եթէ Դաւրէժն ունենար մի համալսարան և զարգացիք, սալմաստցիք, խոյեցիք բոլորն էլ ապագայում համալսարանականներ լինէին. բայց տեսնենք այդ կը յաջողուի, համալսարանը ուսանողներ կարող է ունենալ, եթէ ուսուցիչները (ինչ ասել կ՚ուզի այդպիսի մի բարձրագոյն դպրոցի համար մասնագէտ յատուկ ուսուցիչներ են հարկաւոր) կը մտնեն դասարան չորս-հինգ հոգու համար։

Վերջապէս, ուսումը, կրթութիւնը իւր արժանիքն ու գնահատութիւնը չունենալով Պարսկաստանում դժուար թէ դէպի ապագայ կենդրոնական վարժարանը գրաւ է հասարակութիւն միտքը։ Նախ քան մի բարձրագոյն դպրոց հիմնելու մասին մտածելը, մենք խորհուրդ կը տայինք այդ միտքը յղացող յարգելի պարոններին՝ աշխատել նախ ունեցած դպրոցի և կրթութեան նշանակութիւնը ցոյց տալ ժողովրդեան գործնականապէս և ապա մի այդպիսի մեծ քայլ անել։ Ինչ է ուսման նշանակութիւնը, մինթէ նա մարդկային կեանքի բարօրութեան համար չէ, ցոյց տուեցէք գործնականապէս ժողովրդին եղած ուսման միջոցաւ ձեռք բերած փոքր ի շատէ բարօրութիւնը և նա ինքն այնուհետև կը ձգտի աւելի բարձրն ունենալ։

—

Բայց... բարձրագոյն դպրոցի մասին մտածելու փոխանակ (եթէ միայն քահանաները և գիւղական դպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար է այդ, բաւական է Արամեան դպրոցի մէջ աւելացնել և մի դասարան, որի դասընթացը հաւասար կը լինի Տփխիսի Ներսիսեան դպրոցի Ե. դասարանին), մտածել մի արհեստագիտական դպրոցի մասին, որի արդիւնքը աւելի մեծ կը լինի պարսկահայերի համար, քան մի կենդրոնական կամ ոչ-կենդրոնական դպրոցի։

—

Պէտք է խոստովանուած՝ Դաւրէժի օրիորդական դպրոցների օգուտն աւելի ակնյայտնի է հասարակութեան համար։ Շնորհիւ մի քանի եռանդուն տիկինների և օր. Մատինեանի անձնանվիր աշխատութեան, տեղոյն Լիլաւա թաղում երկու տարուց ի վեր գոյութիւն ունի մի օրիորդաց արհեստանոց, ուր աւանդւում են կանոնաւոր կերպով՝ կար, ձև, ձեռագործ հարթակար, ցանցակար և այլն, և բազմաթիւ հայ և ծառայ ազգութեան պատկանող օրիորդներ (գերմանացի յոյն) կարողանում են այդտեղ ժողովել այն՝ ինչ որ չի կարելի գտնել նոյն իսկ Կովկասի շատ քաղաքներում։ Արհեստանոցն ունի երկու վարժուհի, երկուսն էլ պարապում են ձրի —օր. Հ. Մատենեան և Յոգուա-

ծագիրս (շաբաթական մի քանի ժամ միայն)։ Ինչպէս լսում ենք՝ յարգելի տիկնայքը մտադրութիւն ունին առաջիկայ տարուանից գործադրծութիւնն էլ մացնել արհեստանոցում։ Յաջողութիւն ենք մաղթում յարգելի տիկիններին և և խորհուրդ տալամարդոց՝ հետևել իրանց „թոյլ արարածներ“ կարծեցեալների օրինակին...

Ճշմարտութիւնն ստիպում է մեզ՝ ցաւ ի սրտի նկատել, որ նոյն արդիւնքը չեն տալիս Լիլաւայի և Ղալայի օրիորդական դպրոցները, ուր ուսանում են շուրջ 250 աշակերտուհիներ։ 4—5 գուցէ 6—7 տարի մի աշակերտուհի հազար ու մէկ տեսակ նեղութիւններով տանից դէպ՝ի ուսումնարան չափչփելուց յետոյ, երբ բաւարտում է՝ նա ոչ թէ միայն իւր բոլոր հագուստները ձևել ու կարել չը գիտէ, այլ և իւր ապիտակեղէնները. մայր դաստիարակուց յետոյ՝ նա ստիպուած է իւր մանկան շորերը ձևելու համար ուրիշին դիմել և կամ կաւաը անճաշակ ծակել ու մանկան վիզը անցկացնել։ Կը հարցնէք ինչու, —որովհետև այս տեղի օրիորդաց ուսումնարանները „բարձացաւ“ ունին։ Ութ տարեկան աշակերտուհին մտնելով դպրոց և ասեղ առնելով ձեռքը սկսում է բարձ կարել (կանվայի վերայ) մինչև աւարտելու օրը։ Կանվայի բարձերով հեղեղուած է ամբողջ Դավրէժը. ամեն մի տան մէջ առնուազը մի քանի զոյգ կը գտնէք, և որ աւելի ցաւալին է՝ բարեխիղճ վարժապետներն այդ էլ լիովին չեն սովորեցնում։ Ինձ պատահել է տեսնել մի քանի ուսումնաւարտ օրիորդներ, որոնք թէև շատ կանոնաւոր բարձեր կարել գիտեն, սակայն, որ գլխաւորն է կտրատել (բրթովի) չը գիտեն. հետաքրքրուել եմ դորա պատճառն իմանալ և նիստասխան եմ ստացել, թէ վարպետուհին գիտութեամբ և առանց խղճահարուելու այդ գաղտնիքը չի սովորեցնում աշակերտուհիներին, որպէս զի ինքը նորանցից մի առաւելութիւն ունենայ։ Հրատիրում ենք նորընտիր հոգաբարձութեան ուշադրութիւնը այդ բանի վերայ։

Տիկ. Օ. Ղազարեանց

15 ապրիլի 1894 թ.

Դավրէժ

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

—

25 ապրիլի 1894

Առաջնորդական փոխանորդ Հայրապետական Աշխատասէր ծայրագոյն վարդապետի մահից յետոյ. Բերդաթաղի պատերի վերայ սկսեցին երևան գալ մի կարգ ձեռագիր յայտարարութիւններ իրար ետևից, զանազան բովանդակութեամբ։

Յայտարարութիւնների երևան գալուց սկսած՝ ամենքի խօսակցութեան նիւթն էր Բերդաթաղի հոգաբարձութիւնը, որ իբր թէ նորանք ուսումնարանի փողերը վատնում են աննպատակ և կրթական գործը կաղում է և այլն,

Մի քանի ամիսներ այնպէս, Բերդաթաղի երիտասարդութիւնը զբաղուած էր զանազան բամբասանքներով։

Վերջապէս կայացաւ հոգաբարձական ընտրութիւնն երկու ժողովներից յետոյ, նախագահութեամբ ս. տաճնորդի։

Առաջին ժողովը տեղի ունեցաւ ապրիլի 2-ին Գրիգոր լուսաւորչի տօնի օրը. 220 տուն բերդաթաղեցիներից ընդ ամենը ներկայ էին 18 հոգի, հոգաբարձութեան անդամներից Նազար էֆ. Գորոյեանը, կարդաց եռամեայ տնտեսական հաշիւը, ընտրուեցաւ երեք հոգուց բաղկացած մի մասնաժողով, որ քննեն հաշիւները. կազմուեցաւ արձանագրութիւն, որին ստորագրեցին բոլոր ներկայ եղողները, յետոյ Ն. սրբազնութիւնը յայտարարեց որ այս օր հոգաբարձական ընտրութիւն չի կարող տեղի ունենալ՝ ժողովականների քչութեան պատճառով, խորհրդակցելով ներկայ եղողների հետ, երկրորդ ժողովը նշանակեց ապրիլ 10-ին։

Խաւարամիտների բացակայութիւնը աչքի էր զարկուում այս ժողովում։ Ապրիլ 10-ի ժողովը բաղկացած էր 145 հոգի դավրիժեցիներից, որոնցից 75 հոգի բերդաթաղեցիներ էին։

Նորին սրբազնութիւնը բանալով ժողովը՝ խնդրեց մասնաժողովի անդամներից կարդալ քննութեան արդիւնքը, որը կարդաց պ. Ալէքսան տէր Օհանեանցը. կարդացածը համարեայ թէ նոյն բանն էր ինչ որ ապրիլ 20-ին կարդաց Ն. էֆ. Գորոյեանցը։

Այնու հետև քննիչ մասնաժողովի անդամներից մի քանիսը սկսեցին հարցնել, „պարոնները հետաքրքիր են ձեր կարծիքը իմանալ հոգաբարձուների արած ծախսերի վերաբերութեամբ, աւելացնելով՝ գիտէք, որ ինչեր են խօսում մեր պատուելի հոգաբարձուների վերաբերութեամբ“։

Այս հարցին վերաքննիչ մասնաժողովի անդամներից երկուսը պատասխանեցին. ուսումնարանի դրամագլուխը աչքի առաջ ունենալով ծախսերի մէջ նկատւում է չափազանցութիւն։

Ուսումնարանի դրամագլուխը բաղկանում է անշարժ կալուածներից և պատրաստի դրամից ընդ ամենը 9,000 թուման։ Ներկայ հոգաբարձութիւնը իւր նախորդ հոգաբարձութիւնից ստացել է 6000 թուման։

Հոգաբարձութեան՝ արած ծախսերի առթիւ բաւական երկար վիճաբանութիւն տեղի ունեցաւ, որի պատճառով Ն. սրբազնութիւնը հարցրեց թէ, ո՞ր ծախսերի մէջ էք աւելորդութիւններ նկատում, ծախսերի հաշիւը թող կարդացուի և դուք էլ առանց քաշուելու յայտնեցէք ձեր նկատողութիւնը։

Պարոն Զաքարիայ Նազարբէգեանը կարդաց 93—94 ուսումնական տարուայ եօթամսեայ մանր ծախքերի հաշիւը 1 ղ., 1 ղ. 50 կ. 3 ղ., և այլն, այս ինչ բանին տուած, այս ինչի ձեռքով, այնպէս որ երբ հասարակութիւնը նկատեց թէ եղած ծախսերը ամենաանհրաժեշտ ծախսեր են, սկսեցին զանազան կողմից կըշտամբել քննիչ մասնաժողովի անդամներին. իսկ օրբաղանը նկատեց. ես այսպիսի հաշուեքննութիւն չեմ կարող ընդունել, խնդրեմ մանրամասն քննէք պատուելի հոգաբարձութեան հաշուեմատեանները և մօտակայում մի նոր ժողովում յայտնեցէք ձեր եզրակացութիւնը։

Այնուհետև առաջարկուեցաւ ժողովականներին ձեռնարկել նոր հոգաբարձական ընտրութեան, ներկայ եղողներից մի քանիսը առաջարկեցին քննել հին կանոնագրութիւնը և մի քանի կարևոր կէտերը բարեփոխել և ապա ձեռնարկել հոգաբարձական ընտրութեան։

Վճռուեցաւ մի յանձնաժողով կազմել, որ ուսումնասիրէ հին կանոնագրութիւնը և կարևոր փոփոխութիւնների մասին իւր եզրակացութիւնը հաղորդէ ժողովին։

Բարեփոխուած կանոնագրի համաձայն պէտք է ղեկավարուի նորընտիր հոգաբարձութիւնը իւր գործունէութեան ընթացքում։ Ձայների մեծամասնութեամբ հոգաբարձուներ ընտրուեցան՝ Նազար էֆ. Գորոյեան 65 ձայնով, պ. Ա. տէր Օհանեան 62 ձ., պ. Ա. Միքայէլեանց 60 ձ., պ. Ս. Յովհաննեան 52 ձ., պ. Մ. Նազարբեգեանց 46 ձ., պ. Ջ. Բուդաղեանց 44 ձ., պ. Ա. Աւագեանց 43 ձ., պ. Յ. Ֆէնէրճեանց 43 ձ. իսկ անձնափոխանորդներ՝ Սոլոմոն խան (հեռագրատեսչ) Գրիգոր Մելիք Ազարեանց, Զաքարիայ Նազարբէգեանց Գալուստ Վարդանեանց։

Զբաղելով, որ երկրորդ ժողովում խաւարամիտները մեծամասնութիւն էին կազմում, այնու ամենայնիւ նորանց բոլոր աշխատանքներն ապարդիւն անցան

Մի քանի անուանց ընթացքում իրանց ընտրած գրպարտութիւններն և քամբանքները և ապարդիւն պրոպագանտան հին հոգաբարձութեան դէմ բոլորովին անօգուտ եղան։

Աստուած աղբիւրներից լսում ենք, որ Ն. Ս. Յովհաննէսեան և պ. Ֆէնէրճեան մոտագիր են Դրամարկղի պաշտօն։

(Հասօ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ շաբաթ բաղարս ժամանեց հայրապետական ներկայացուցիչ Գասպարովին իւր բնտանիքի հետ, և այս շաբաթ մեկնեցաւ Սպասն ուր հրաւիրած է բժշկերու հանար արքայորդի Զէյր-Սուլթանի ապրիմը։

Անցեալ Կիրակի օր մի խումբ տարոններ ս. Գէորգ եկեղեցու մէջ հանդուցեալ տար Միքայէլ Մարգարեանի մոնուան առաջին տարեդարձն առնելու դիպուածաւոր դրեալն հանդուցեալի գերեզմանը վերայ։ Արտասանուեց նաեւ մի ճառ։

Հաստատուած են Արմենիայի խմբագրութեան ներքոյ գործեցեալ մի 10 և 11 համարների վերայ։ Գանգատողներ պարոններ Քոյ ներող լինին մեզ որ 9-րդ համարի բովանդակութիւնը արդէն կազմուած լինելով, մենք անկարող եմք „Հանդիսատեսի" երկար յոդուածը տալ մի 9-րդ համարում։

Տեղն պակասութեան պատճառով չկարողացանք այս համարում մոցնել „Հայրենասիրութեան լուսաւորութեան միջոցներից մէկը" խորագրով յոդուածի շարունակութիւնը որը մտնում ենք յաջորդ համարին։

Զաւղայից մեզ գրում են, „Անցեալ 17 Զատիկ կիրակին մի անմոռանալի օր էր մեր գաւղացիների համար։ Պատարագիչ էր ինքը Նոյն գրաբանդ։ Այդ օր առաջին անգամ դպրութիւն էին անում ս. Կատարինէ դարձի եւ կեդրոնական կանանոցի աշակերտները եւ աշակերտուհիները։ Օրիորդների խմբի կարգավարին էր ժամագրագէտ Ս. Յակոբի Ղազարեան, տղայոցը, ժամագրագէտ ս. Պողոս Շնէլուր. իսկ բոլորին դեկավարում էր քահանայ Ստեփան Մարտիրոսեանցն։ Ներդաշնակութիւնը ճշգրտի էր, եւ մոլովուրդ մերին ուսանելի բղջաքաղած դեղեցիկ եւ կանոնաւոր երգեցողութեան ուրախութեան տակ։ Նմանապէս էին նաեւ երգեցողները, իմաստի գիրքը, թարգմանը։ Լսողներս բերկրանքով ակնածանքի եւ մեր ընտանիքներ մոլովուրդ նոյնի կարողացաւ կենդանի նոյն որդեմտի ցանկը, որ նախապէս այնքան սրդելն էր։ Զ. Զատիկը բանանալ՝ բերելով, առաջին անգամ մոդրեց կանոնաւոր ժամերգութիւն Կ. Զատիկի մէջ։ Լրացաւ եւ դէպ Զատարանի տղան յարգելը այդ քան քիչ ժամանակամէջ արդէն։

Նոյնպէս գաւղին է որ Ինքնակոչը չուզեցին պարտուիլ՝ որ պատ. հանդէս, —ուղարկի երկերկու աշակերտ Ամեն անգամ Ն. Զ. ոյ, որ վանքն ծախքով պիտի ուսանի ժամագրութիւն, այդ կերպով փոխ վերջ մեր անվերդաշնակ ժամերգութեան։

Խմ.

ԱՐՑԱԳԻՆ ՏԵՍԱՐԹԻՆ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

„Մշակից" քաղում ենք հետեւեալ լուրերը։ Վանից հեռագրով հաղորդուած է կ. Գալսի թիւրքաց կառավարութեան, որ սարսափելի հեղեղները ահագին վնաս են պատճառել տարբոյ նահանգին։ Միայն Վան քաղաքի մէջ հեղեղը քանդել է աւելի քան 200 տուն։ Արճէշի մէջ անձրեւը հիմնայատակ է արել մօտ 100 տուն։ իսկ Աղրլճվագի մէջ եղած աւերումները անկարագրելի են,—600 տուն քանդվել է, ջրասոյզ են եղել ոչ միայն ահագին քանակութեամբ ապրանք, այլ և մարդիկ։ Պոստային և հեռագրական յարաբերութիւնները, ինչպէս հաղորդում են, կտրված է, Կավարի մէջ նոյն իսկ հեռագրական կայարանը ողողվել և քանդվել է։ Սովը աւելի անտանելի է դարձել հաղորդակցութիւն չը լինելու պատճառով։ Ազգաբնակութիւնը յուսահատութեան մէջ է։ Կ. Պոլսի լրագիրները լի են ամենագառն նկարագրութիւններով։

Ապրիլի 16-ին շաբաթ օր թեմական երեկոյեան, Թիֆլիսի բոլոր եկեղեցիներում կարդացվեց Վ. Հափառ Կաթողիկոսի կոնդակը՝ սովեալներին և գաղթականներին օգնելու մասին և ապա իսկոյն ոկսվեց հանգանակութիւն։ Ի նկատի ունենալով, որ այդ երեկոյեան եկեղեցիները, տօնի պատճառով լի են լինում ահագին բազմութեամբ, իրաւունք կար կարծելու, որ եկեղեցիներում սկսված հանգանակութիւնը գէթ մի քանի հազար բուբլի կը տար։ Տարաբաղդաբար, հաւաքված գումարը միայն մի քանի հարիւրի է հասնում։ Ամենամեծ գումարը դուրս եկել է Վանքի մայր եկեղեցում 133 բուբլի, իսկ ՀարուածիՓամոյեանց եկեղեցում 100 բուբլի Հալաբարի Շամքոռեցոց եկեղեցում 92 բուբլի, Ղիզրաշէնում 60 բ՝ իսկ մնացած եկեղեցիներում շատ աննշան, քան և նոյն իսկ տասն բուբլի։

—Էրզրումից մի մասնաւոր նամակով գրում են հետեւեալը. „Քաղաքիս մէջ և շրջակայքը արդեանց թանգութիւնը կը սատկանայ, նոսամահ կըլլան, թարդիկ կը կոտորուին, հիւանդութիւնները անտանելի են։ Մեծագոյն դժբաղդութիւնը այն է, որ տակաւին խար ձմրան մէջ կը գտնվինք. քաղաքը ձիւնապատ, դաշտերը ձիւնապատ և ճամբաները ձիւնապատ"։

Աբոնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՇԱԲԱԹԱԿԻՈՒՄ Լ

„ԱՂԲԻՒՐԻ ԵՒ ՏԱՐԱԶԻ"

ՆԵՐԿԱՅ ԹԻՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՂԲԻՒՐԻ բաժանորդագինը առանց պրեմիաների Յր.

ՏԱՐԱԶԻՆԸ 6 ր. Հասցեն Tiflis. Réd. „Agbiour et Taraz",

ՈՎ. ԿԱՄԵՆՈՒՄ ՍՅԱՆՆԱՅՑ ՊԱՏԿԵՐ ԻՐԻԹԱՊՐԷՄԱՆ, ՊԷՏՔ Է ՄԻԱՆԱԼԻՆ ԵՒ 5 ՐՈՒԲԼԻ.

Խմ. Հրատ. Տ. Նազարեան

Դարձեալ հայոց Լրթական „Սէր" ընկերութեան նեկայ 1894 թուականի անդամակցութիւնը ացուած լինելով վարչութիւնս դիմում է օտար քաղաքների անդամներին, խնդրելով, որ շտապեն նորոգել իրանց անդամակցութիւնը և կանոնագրի փոփոխման ու նոր վարչութիւն ընտրելու մասին իրանց գիտողութիւնները ուղարկել գրաւոր կերպով ընկերութեան հասցէին։ Անդամակցել ցանկացողները ձայն կ'ունենան Զատկից յետոյ կայանալիք ընդհանուր ժողովում։

Հայոց կրթական „Սէր" ընկերութեան վարչութիւն։

Շուտով կը կայանայ հայոց կրթական „Սէր" ընկերութեան բ. վիճակախաղը։ Տոմսակները վաճառում են կենդրոնում այս հասցէով. Tauris (Perse) Comité d'Instruction arménienne „SER", Թէհրանում, պ. Հայրապետեր Յակոբեանի մօտ (Գրամեան կամուրջ), իսկ Գարակաստանի մէջ հայաբնակ քաղաքներում ընկերութեան գործակալների մօտ։

Վարչութիւն հայոց կրթական „Սէր" ընկերութեան

ԿՈՆԴԱԿ

Մկրտիչ Ծառայ Յիսուսի Քրիստոսի և ողորմութեամբն Աստուծոյ Կաթողիկոս ամենայն Հայոց, Ծայրագոյն պատրիարք հնամաքգական նախամեծար աթոռոյ Ա-բարատեան Առաքելական մայր եկեղեցւոյ որբոյ կաթուղիկէ Էջմիածնի։

—

Աւետարանի սիրոյ ողջոյն մատուցանեմ առ ամենայն Եկեղեցիս Հայոց, որք կան ընդ հովանեաւ Մեծին Ռուսիոյ Իշխանական թագաւորութեան։ Աղօթս առնեմ վասն ձեր ամենեցուն հանգերձ միաբանական ուխտիս, կոչ մնալ ձեզ ի շնորհս Տեառն ի ճշմարիտ հաւատս Աստուածպաշտութեան ի սէր և ի պատուիրան Աւետարանի ընկերսիրութեան, որոյ յայտնացոյց նշանաւ միայն ճանաչէ զձեզ տէրարհ թէ դուք Քրիստոսին էք և Քրիստոս ձեր։

Յետ ողջունական բանիս, այժմ մասնաւոր կոնդակաւս պիտի խօսիմ ընդ քեզ ժողովուրդ Հայոց, պարզ լեզուով և ոճով, որպէս զի դու չքմեղս լինելով չասես թէ չեմ հասկանար և չեմ իմանար գրոց լեզուն և այլն։

Ես գիտեմ քո բնաւորութիւն, դու շուտով կը գայթակղիս և գուցէ մեղադրելով կասես. Հայրիկ գնաց կաթուղիկոս եղաւ, մոռացաւ իւր պարտք և ամենքան, միայն մի անգամ չոր ողջունի կոնդակ մի հրատարակեց, ոչ խրատ խօսեց, ոչ պատուէր տուաւ, քերան փակեց, գրիչ վար դրաւ և այնպէս անհոգ նստած է Էջմիածնայ վեհարանում, չը գիտենք, ինչ կը խորհի, ինչ կը մտածէ և ինչ պիտի անէ, սպասում ենք և մեր համբերութիւն հատաւ։

Այո՛ այդպէս կը թուիմ դատողաց առաջ, որովհետև չը կամիմ փող հարկանել ի հրապարակս, այլ պէտք է պատմեմ քեզ, որ դու իմանաս, խելամուտ լինիս, համբերես ու կարճես քո մեղադրանքէն։

Քաւ թէ ես կը սրտմտիմ կամ խուսափել կուզեմ քու մեղադրանքէն, զի քաջ գիտեմ թէ այդպէս եղեր է մերնախորդաց և ինձ համար էլ պիտի լինի, և ով կարող է բազմամիտ, բազմաբերան և պահանջող ժողովուրդի դատաստանէն խոյս տալ։

Օրհնեալ լինի ժողովուրդ, դատել պահանջել իւր իրաւունքն է, եթէ չը դատէ, չը պահանջէ՝ գիտեմ ես թէ էն ժամանակը մեք որչափ անհոգ և անպիտան կը դառնամք, միայն թէ ուղիղ դատէ, տարաժամ չը պահանջէ և գիտենայ ժամանակ և թէ որչափ պահանջել պէտք է. „Զի ամենայն իրաց ժամ է և ժամանակ“, ասում է Սողոմոն։

Դու իմանալ կուզես թէ ինչ կը խորհի Հայրիկ. ինչ պիտի խորհի, Սաղմոս կը կարդայ, „Երանի՜ որ խորհի զաղքատարն և զտնանկն“։ Այժմ թողած ամենքան, աղքատներու համար կը խորհիմ. սոված ժողովրդեան համար կը խորհիմ։ Եւ այս հրաւէր կարդամ քեզ, ժողովուրդ Հայոց. որ դու էլ պահ մի թողուս ամենքան և միայն աղքատին համար խորհիս. որպէս զի Դաւթի և Յիսուսի երանութեանց արժանի լինիս։ Արդ սկսիմ մի համառօտ հաշիւ տալ քեզ և դու իմանաս թէ Հայրիկ իւր միաբանութեամբ ինչ վիճակում պաշարուած ու պարաւանդուած է։

Այսօր գրեթէ վեցերորդ ամիսն է այն օրէն երբ ես արժանի եղայ ողջունել Էջմիածնայ Մայր Աթոռ. շուտ անցան գնացին այնչափ ովսաննաներ և մեծադղորդ կեցցէներն և այժմ խոր լռութիւն և տխրութիւն տիրեցին մեր շրջապատը և միայն լսւում են անօթի, քաղցած գիւղական ժողովուրդին և ընտանեաց մանրիկ զաւակներուն լացն ու աղաղակ։

Վեց ամսեայ միջոցում գրեթէ հազարէն շատ աւելի զանազան խնդիրներ եկան կուտեցան առաջս։ Այդ խնդիրներ բազմատեսակ էին, մեծ մասն ամուսնական կնճռալից գործեր էին, որք խընդրում էին լուծել և շուտափոյթ լուծել։ Մի մասն ևս գիւղական ժողովուրդի խնդիրներ էին, որք դաս դաս խմբովին եկան ներկայացան հետզհետէ և մատուցին իրենց համախօսական թղթեր, որոնց թիւ հասնում էր մինչև հարիւր յիսունէն աւելի, և ինչ էին խնդրում. Հայրիկ, քահանայ կուզեմք, քահանայ։ Ոմանք հաստատելով ասում էին՝ Հայրիկ, մեր գիւղեր՝ կան որ հինգ տարի, ութ տարի և մինչև տասն տարի է որ ծխատեր ու սեփական քահանայ չունին, որչափ դժուարութեամբ ուրիշ գիւղերէ քահանայ կը մուրանք, մանաւանդ ձմեռը ձիւն ու բուք եղած ժամանակ։ Ոմանք թէ մեր գիւղերու քահանաներ ութսուն տարին անցուցած, խիստ ծերացած, զամառութեան վիճակին հասած են, էլ չեն կարող պաշտօն կատարել։ Ժողովուրդի այս խնդրոց համար չեմ ուզեր մանրամասն գրել. „Արարատի“ մէջ թող կարդան ընթերցողներ Արշէն երէցի քարոզ։

Այս խնդիրներ ամեն ժամանակ սովորաբար եղած են և այնքան վհատեցուցէջ չեն, որ և իցէ եղանակաւ կարելի է լուծել, կարգադրել և գոհ անել խընդրատուներն։

Բայց եկ տես, որ խնդրոց ամենամեծ մասն՝ գաղթականաց խնդիրն է, բոլորովին չքաւորուած. կտոր մի հացի կարօտ գիւղական ժողովրդի պաղատանքն է, որոնք խումբ խումբ իրենց ընտանիքով, մանրիկ զաւակներով սկսեալ աշնանէն մինչև ցայսօր՝ կուգան կը լեցուին Էջմիածնայ Հայրապետանոցը։ Եւ տես դու ինչ անհանդուրժելի տեսարան բացւում է մարդոյն աչքին առաջ։ Եւ ով կարող է գթոտ աչքով նայել ու չարտասուել։

Գիտես թէ լքեալ ու յուսահատ ժողովուրդի հոգին իր անձկութեան մէջ բանաստեղծ կը դառնայ, և քանի բնական ու սրտառուչ նկարագիր կը հանէ թղթերուն վրա և իւր կրած ցաւեր պատմելու մի ճարտասան կը լինի։ Ես մըտիկ արի վշտագին ոգւով, դուք էլ մըտիկ արէք, ժողովուրդ Հայոց, և տեսէք ինչ կասեն։

Հայրիկ՝ մեք ոչ ամուսնական խնդիր ունիմք և ոչ քահանայի. մեք թողինք մեր քահանայն մեր գիւղի եկեղեցւոյն պահապան. եկեղեցին ու քահանան մընացին առանց ժողովրդի, թողինք մեր շտեմարան, ճլիւրի փեթակ, հացն ու թոնիր տան տիկին ելաւ տնէն, կորեցաւ ծուխն երդիքէն, թողինք մառնի եղեր, լի ամաններով պանիրներ, թողինք մեր կանաչ արտեր, մեր գութան ու արօրներ թողինք անտնան Ալաշկերտու հայրենիք։

Հապա մեր սուրբ Յոհաննու երեքխորան վանք, Նպատ լեռ, Եփրատայ սուրբ գետ, ամեն մեր ինչքեր կողոպուտ տուինք, առինք միայն մեր ընտանիք, հարսներ ու հասած աղջիկներ, եկանք քրիստոնեայ երկրին ապաստանեցանք։ Մենք շատ զոհեր տուինք մեր ընտանեաց սիրոյն համար, որպէս զի ազատենք զանոնք առևանգող բիրտ քիւրտերուն ձեռքէն։ Է՜, Հայրիկ, մենք այժմ ուրիշ բան չենք խնդրեր, մեզ պէտք է միայն պատսպարան ու հաց, զի մենք անտուն, անօթևան մնացինք։

Այսպէս, ժողովուրդ Հայոց, աղուեաներ սեպհական որջ ունին, երկնից թռչունները բոյն, ինչպէս ասաց Քրիստոս որ գլուխ դնելու տեղ չունէր։ Միթէ Քրիստոսի նման իւր հաւատացեալ գաղթական հայ ժողովուրդ ունի՞ իւր գլուխ դնելու տեղ։

Կարսի սահմանագլխէն սկսեալ գաղթական ժողովուրդի տարածութեան մի ծայր հասած է մինչև Երևանայ դաշտի

պիտի ազատվի մեծագոյն մասն Կարսի նահանգում տեղաւորված են։ Ինչ մոռանայ երախտագէտ ազգով լիշել ատ և յանուն ազգին լայտնել իմ շնորհակալութիւնս Երևանայ և Կարսի նահանգապետներուն, որք բարձրագոյն հրամանաւ և իրենց բարեսիրտ ազնուութեամբ թոյլ տուին գաղթական անտէրունչ ժողովրդին, որ մինչև գարուն հիւրընկալուին Հայոց գիւղերում։

Ինչ պիտի լինի գարուն, որ եկաւ ահա, միթէ անաշխարհիկ, անբնակ բուսնալեր թռչնոց համար գարուն աւետաբեր է, որոց համար աւաղ, որչափ յարմար է քանասեղծին երգ.

„Ինձ համար չէ գարնան գարը“։

Նորա պիտի լինի Բագրևանդայ և Սուկաւէտ ծաղկազարդ ու ջրաշատ լեռնան գարուն։

Օրհնեալ լինին Շիրակայ և Արարատեան գաշտերու գիւղական բնիկ հայ ժողովուրդները, որք հիւրասէր հայր Աբրահամու պէս իրենց դռներ բացին, ուր մարդ տեղաւորեցան խեղճ ու թշուառ գաղթական ընտանիքներ։

Քանի դառն ու դժուար է, Բագրեւանդայ ճամբան տանուտէր, որոյ դուռ բաց էր հայցալից սեղան պատրաստ ամեն հիւրերուն, նա մարագի մի քունջ հաւաւ պէս ծուարեցաւ իւր ընտանիքով և ձաղդերով և լաւագոյն համարեց այս խրճուկ կեանքը, որ ազատեցաւ քիւրդերու սպկաի բռնութենէն։

Այսպէս առ ժամանակ մի թէպէտ գիւղերում պեռեղված են գաղթական ընտանիք, այլ ամեն օր և շաբաթ դիմում են Մայր աթոռի դուռը, ոչ միայն կարօտութեան համար, զի մեզ շատ լայտնի է նոցա դառնավիշտ վիճակը, թշուղունք օրապահիկ հացի ծնունդ կը տեսնամ աչքովս իրենց պատառոտած կերպարանք սակ կտաւէ շապկի մի կարոտ, մանկիկներ մերկ ու բոբիկ։ Զարչարանքի վարժված ժողովուրդը դեռ համբերում է այս տառապանքի մէջ և իւր ապագայն մտածելով հարցնում է, Հայրիկ, մեր վախճանը ինչ պիտի լինի։

Իսկ ես խոր մտածութեան մ՝ [illegible] բանած չը գիտեմ թէ [illegible] նեմ կամ յուսա[illegible] տեալ ժո[illegible] տական [illegible] ժամանակի [illegible] պով բացատ[illegible] իրենց [illegible] ղորդորել, որ դարձեալ իրե[illegible] այրենիք վերադառնան, վասն զի կարելի չէ, որ Աբրահամեան երկիր նոր գաղթականութիւն ընդունի, որովհետև իւր բնիկ ժողովուրդ այնչափ ազգեր ու բազմապատկեր է, որ այլ ևս մշակելի հողեր բաւական չեն իրենց համար. դուք մի յուսաք թէ բնիկ երկրին ժողովուրդ թիզ մի տեղ ձեզ բաժին կուտայ, հայ դպատանարան տվաւ ձեզ մի փոքր ժամանակի պամարդ կարծում էք հող էլ պիտի տայ։

Դուք ձեր Արարատի դաշտում շատ հարուստ էիք ձեր ընդարձակ հողերով և իրրև տանուտէր կալրէիք գիտէք ինչ դառն է ձեզ համար երբ հողատիրութենէն զրկվելով ծառայ և մշակ դառնաք այստեղ և այնտեղ, ձեր սեպհական հողերը օտարներ գրաւեն։

Չէ, Հայրիկ, չէ, դու չը գիտես, մեր քաշած անտանելի զրկանքներ, թէ միայն ընչից յափշտակութիւն լիներ, այդ ոչինչ էր, զի մեք շատ փաղուց ի վեր սովորած ենք այդ կերպ զրկանքներուն, բայց մեր աչքի առաջ ճեպապտուտիններ մեր ապրիկները ամենայն բռնութեամբ վայրենի քրդեր յափշտակում են և կը տանին ըստ կիրքով Բրիատոսի հաւատաք ուրանալ կուտան, այլ ևս մենք կարող ենք հանդուրժել։

Թող, Հայրիկ, թող, մեք ծառայ լինենք, մշակ դառնանք, միայն Աստուծով ապրիմք մեր ընտանիքովս զոհանքով։

Այսպէս կը մտածիչ կը խօսի ու պատանեան կուտայ վշտակիր ժողովուրդ և ով կարող է մեղադրել դինքն։

Թողունք գաղթական ժողովրդին նայացէն ու տառապանք, մի այլ տառապանք ևս տառապանքի վերայ ծանրանալով, սաստկապէս ճնշում է Մայր Աթոռը։

Յայտնի է որ երկու տարի իրարու վերայ երաշտութիւն լինելով երկինք անձրև չի տալ որ երկիր հայ բուսցնէր. ուստի Արարատեան դաշտի և մի քանի ուրիշ դաշտերու գիւղական ժողովուրդ ոտտիկ չքաւորած են, թէև քաղաքներում ցորեն պիտի խնայ առատ է, սակայն երկրագործ ժողովուրդ փող չունի, սորա համար ճարահատած խումբ խումբ դիմում են Մայր Աթոռին իրրև նորա հոգեծին դռնակներ ժառում են կամ հայ կամ փող և գերիշոչինչ։

Այսպէս քաղցած ու ծեղված մեր Լուսաւորիչ քուրը հոր որդիքներ իրաւունք ունին իրանց Հօր տան և Աթոռին դիմել, հապա Հայրիկն ում դիմէ, տասցէք ժողովուրդ Հայոց, եթէ ոչ առ ձեզ։

Հրամէր պարդարդ առ [illegible] զպլինս Ուսիոգ կոչեմ զձեզ [illegible] ի կարեկցութիւն գիւղացած ժողովրդին։ Ոչ եթէ խընդրում որ հանձն ազգայինք հաւասպէս ընդհանուր հանգանակութիւն բանեն, զի այդ մեծին բարձրագոյն հրամանի պէտք կայ, այլ մանաւորապէս կարող անձինքներէն կամաւոր նպաստ և ողորմութիւն կը խնդրեի յանուն ազգապատին, որ զիս իրրև իր ձեռք կարկառուսմէ։

Կարկառեցէք ողբեմն և դուք ձեր ձեռք այն քաղցրութիւնս ազգատ զաղաքներուն, որոնք Էջմիածնայ տաճարին տակ շարված սպասում են կանչակի ձայնին, տեսնանք թէ ինչպէս վազելով կը թափեն ի սեղանատուն։ Միայն իրենց փոր կը շտապցնելով քաւական չէ, այլ տեղանէն ելնելով կը ժողովին Վեհարանին և գանձարան դրան առաջ և սկսում էնք իրենց „Հայրմեր“, ալալէլ, մեր փոր կշտացաւ, Աստուած շէն պահէ քուրը Էջմիածնայ վանք, բայց Հայրիկ, մեր ընտանիք, մեր մանրիկ աղեկք անօթի նուազած են տան մէջ, հալած աչքերով սպասում են որ գուցէ դառնամք իրենց օրապահիկ հաց տանեմք։ Երկու երեք օրով անօթի մայրեր կան, որոց ծծերուն կաթ ցամքած է, կամենկեր երեխաներն էլ իրենց գրկին մէջ ցամքած ու մաշած են, Աստուծոյ սիրոյն լինի տուէք մեզ հաց կամ փող տանենք հասցուենք մեր սոված ընտանիքներուն։

Այս նկարագիր պիտի շարժէ անշուշտ մեր ազնվագոյն մեծատանց և լսմեն դատակարգ ժողովրդին սիրտ, պիտի շարժէ նաև հայոց մայրերու սիրտ իրենց առատ և ճոխ սեղանի փշրանքներէն բաժին հանել աղքատ գաղթականներուն։ Երանի թէ էլ արժանի լինիմ լքատարել իմ հայրական պարտիքս և քարև սպասաւոր մատակարարեմ այդ փշրանքներ կարօտած խեղճերուն։

Խոստովանիլ պէտք է որ մեր սակաւ փշրանքներ նպաստ և ողորմութիւն մի մի կաթիլ ջուր են, երբէք չեմ բաւական պասքած ժողովուրդին ծծուն անկանել, դարա համար մի յորդաբուխ գետ պէտք է, և այդ գետ բղխում է մեր Մեծ խընամակալ Կայսեր տէրութեան ակնէն, որ իրրև երկնուց Հօր պատկեր ներկայանում է աշխարհիս վերայ. զիտէ Նորին Մեծութիւն իւր ՝ներքի կամք իգործ դնել, և առանցապէս բանալով իր ոսկեայ ձեռն և լիապէս ջուր տալ իւր Ճաւատարիմ հպատակ ծարաւած ժողովուրդին։

Եւ ինձ կը մնայ ցանկամ պաղաթել և հանապազ աղաթել մեր գթառատ Կայսեր թանգագին կենաց համար, որոյ կեանք բովանդակ երկրին և ժողովուրդի բարեբարութեան կենանքն է։

Աղաթեմ և վասն ձեր ժողովուրդ Հայոց, դուք ևս բնդունելով Հայրիկին հրաքեր ձեր փոքրիկ փոքրիկ ապրեբակներու ձկներ բանաք և ծարաւած ժողովրդին բաժակ բաժակ չուր բաշխէք, զիտելով և հաւատալով որ վարձատրիչ Տէր Աստուած ձեր բաժակներու փոխարէն երկնից արքայութեան դրախտի գանձերէն մրտի բաշխէ, որոյ ջուրն կենաց անմահական ջուր է։

Իսկ թէ արժանի անէ Տէր ամեն ծարաւած հոգիներուն բմպել այդ կենաց ջուրէն և օրհնել զանուն նորայ յաւիտեանս. Ամէն։

Ի Գեղարդի վերայ ստորագրած է՝

Մակարիչ Կաթողիկոս Ամենայն Հայոց

28 Մարտ 1894 թ.

Էջմիածին